27. 01. 2024թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Դավթյանս քննելով 12.01.2024թ. Թիվ 2 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ 12.01.2024թ.-ին ժամը 02:45-ի սահմաններում Էդգար Հենրիկ Ադամյանը/ծնվ.10.12.1983թ., հաշվ. է Շիրակի մարզ, Գյումրի համայնքի Ա.Մյասնիկյան փող., տ.242 / հանդիսանալով Արարատի Մարզի Այնթապ գյուղի Երևան-Արտաշատ խճուղում գտնվող <<611>> կարառկե ակումբի տնօրենը սրահի ներսում չի պահպանել ՀՀ ՎԻՎՕ-ի 173.2 հոդվով նախատեսված նորմերի պահանջները, այսինքն ակումբի սրահում գտնվող սեղանների վրա առկա է եղել ծխախոտի համար նախատեսված մոխրամաններ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի <<ը>> կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Էդգար Հենրիկ Ադամյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 150.000 /հարյուրհիսուն հազար/ ՀՀ դրամ գումարով՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակ _____2024թ. _____

Պետ,
ոստիկանության փոխգնդապետ Ա.Դ.Դավթյան